

ԲԱԺՆԵԳԻՆ

ՊԱՅՄԱՆՔ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.

Վեցամս. 5 "

Արտասահման

Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

Ամերիկա

2 Տղ. 30 սենդ

ԿԱՆԽԻԿ



Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՅԱՆՂԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

2. ՏԱՐԻ

ՄԱՐՏ. 9 ՇԱՐԱԹ 1902

ԹԻԻ 243

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԵՇՐԶԱՆ

ՀԱՅՆԵԼԻ այսօր իր գոյութեան հինգերորդ շրջանը լրացնելով՝ վեցերորդը կը թեւակոխէ. Երբ մէջ այն ալ յարտաաւան, հինգ տարի շարունակ հրատարակել թերթ մը որ իրեն նպատակ ընտրած է ձաղկել ընկերային մոլութիւնները, թէ ինչ զրկանքներու և զոհողութիւններու կը կարօտի, միայն կարող են հասկնալ ու ըմբռնել ամեն անոնք որ քիչ շատ ճշգրիտ գաղափար մը կազմած են մեր ընթերցող հասարակութեան վրայ:

Ընկերական և ընտանեկան ապեղ բարքերը ձաղկող թերթ մը որ կարող եղած է հինգ տարի շարունակ հրատարակուիլ, հակառակ իր կամիքները վայելողներու կողմէ եղած հալածանքին, դա կը նշանակէ թէ ժողովուրդին մէջ կայ մաս մը որ ըմբռնած է անոր օգտակարութիւնը և կը քաջալերէ զայն:

Այսու չենք ուզեր — ու արդէն չենք ալ կարող — վարդապոյն ներկայացնել Հայքի Նիթական վիճակը: Չէ. ան ալ ինչպէս բոլոր աշտասաններէն հայ թերթեր, գրեթէ շարունակ կայր Նիթական անձկութեան մէջ:

Յորչափ ճիշդաւորակ ընթերցանութիւնը գոյութիւն ունի մեր մէջ ցորչափ սոսցած թերթին բաժնեդէր չվճարելու կախողներէն ինչ կայ դեռ հայ թերթերու բաժնեդէր մէկ կարեւոր մասին քով, հայ խմբագիր մը չէ կարող հաստատել իր անձեռն ապիւստէ մը ունենալ: Ու այս արտասահմանեան թերթերու վիճակուած չէ միայն: Խմբագիր մը որ իրեն նպատակ ընտրած է կռուիլ, մաքառիլ հին ու արմատացած կամ նո-

րախառ յուր ու միասակար բարքերու դէմ, ամեն տեղ միեւնոյն վիճակը կայ՝ հասմանուած իրեն համար, Կուզէք օրինակներ, չեն պակիր, անա թուենք մէկ քանիներ՝ Յ. Սրվաճեան, Յ. Պարոնեան և Ա. Այվաչեան: Այս անուններուն քով բոլոր մը իսկ չենք ուզեր աւելցնել, որովհետեւ ինքնին արդէն պէտքէն աւելի կը խօսին:

Հայքի իր գոյութեան հինգ տարեկան շրջանի մէջ համակիր բարեկամներու շրջանակէն գոյալ կատաղի հակառակորդներու, վատհոգի թշնամիներու ալ բաղխեցաւ որոնք ամեն գնով ջանագիր եղան Հայքի գոյութեանը վտանգել, ինչո՞ւ, ուրովհետեւ հոն աղտոտ գեղերնին իրենց բոլոր տղեղութիւնով պատկերացած կը տեսնէին՝ ցաւ կողմ ցարմացում մը զգալով, և՛ կը խաբաղանուէր մոլութիւններ, որք անհատ ընկերութեան փոխանձելու բնոյթը ունէին:

Հայքի հակառակ այս եւ ուրիշ աննպատակ հանգամանքներու, խոչնդ ոտներու ու դժուարութեանց դիմագրաւելով, իր համակիր բարեկամներու քաջալերութեամբը շարունակելով իր բնութեամբը, առաջ ուրախութեամբ կողջունէ իր վեցերորդ տարեշրջանը:

Այս որ շրջանն ալ, ինչպէս միշտ, պոռոտ խոտուաններու շարքով չղեւի սկսինք, չէ. մեր համակիրներուն շնորհակալութիւննիս յայտնելէ յետոյ սա կըսենք որ Հայքին պիտի շարունակենք հրատարակել միեւնոյն ուղղութիւնով, զայն աւելի ճոխացնելու համար: Զանքերնիս ալ չի խնայելով: Այսչափ:



ԱՉԳԱՅԻՅԵ

— 0 —

— Մայր եկեղեցւոյ նորոգութեան համար Պատրիարքը հարկ եղած ուսումնասիրութիւնները կատարելէ վերջ, հանգանակութեան ձեռնարկելու համար տպուած ընկալաւորներ պատրաստել պիտի տայ և շատ տեղեր ալ ինք անձամբ գիմնամ պիտի ընէ:

— Յունաստանի մէջ ծովուն տակէն Հէրմէսի կոտորուած արձանը հանուած ըլլալով, զայն յարգարելու և վերակազմելու համար Պոլսոյ հելլենական դեպան Մովսէս Բորոյան Յունաստանի կրթ. նախարարութեան յանձնարարել է հայ արուեստագէտ մը որ պիտի կրնայ յաջողութեամբ գլուխ հանել գործը: Այդ հայ արուեստագէտն է եղեր Պոլսոյ Գեղարուեստական վարժարանին գեր տնօրէնը և արձանագործութեան ուսուցիչ Տ. Ոսկան, որ իբրեւ տաղանդաւոր արուեստագէտ Հռոմի գեղարուեստից վարժարանէն մեկնելէն ետքն այժմ ուսուցիչները հիացումով կը յիշատակեն եղեր իր անունը:

— 0 —

— Էջմիածինէն կը գրեն թէ տեղւոյն Ղաչարապատ հիւրանոցին մէջ մեռեր է Ակնցի Յովսէփ ձանկեան, որ կաթողիկոսական վերջին ընտրութեան ժամանակ իր թեմին կողմէ իբր պատգամաւոր էջմիածին գացած էր և հոն հաստատած իր բնակութիւնը: Ունի «Հնութիւնք Ակնայ» բանասիրական գործը: Իր վերջին տարիներուն մէջ կարօտ վիճակ մը ունեցած ըլլալով, Ս. Հայրապետին կարգադրութեամբ վերոյիշեալ հիւրանոցին մէջ կապրի եղեր:

— Վանայ Վարազայ վանուց վերակազմեալ հոգաբարձութիւնը սկսեր է ձեռնարկել իր պաշտօնին, և Վարազայ Որբանոցին տեսուչ կարգեր է Ռուբէն Շատուրեան անուն առաջնակարգ ուսուցիչ մը:

— Երեսուղէ-մէն կը գրեն թէ մինչև անցեալ շաբթու. 300 հայ ուխտաւորներ հասած են հոն:

ԳԻՏԱԿԱՆ

— 0 —

Ք. . . ՃԱՌԱԳԱՅԻՅԵՐՈՒՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Ք. . . Ճառագայթները գտնուելէ մինչ այս թուականը շատ մեծ ու յաջող քայլերով յառաջ գացին՝ ու հեղինակը բրոֆէսէօր Ռէօնթկէն արժանացաւ Նոպէլի մրցանակին: Այս գիտը շատ դժուարեցաւ ու օգտակարութիւնը աշխարհի ծանուցուեցաւ: Հաշարում, կ'վիրաւորներ քարտիրոս վիրաբույժներու կոյր դանակներուն ներքեւ սրտամորմոք ճիշտով ու վայնասուններով հիւանդանոցներու շէնքերը կը դղրդէին, և ահա Ռէօնթկէններուն ճառագայթները եկան ամօքիչ բալասան մը ըլլալու այգալիսիններուն: Ասոր շընորհիւ էր որ շատ մը սպիներ, սակրափտումներ կը տեսնուէին այնչափ յոտակ ու որոշ ինչպէս կարելի է տեսնել մարդուս իր կենդանի կարը սնդակաղօծ ախպակին մէջ: Վիրաբույժութիւնն ալ կը պարծէր, վասն զի իր վերջակէտին մէջ այդ գիտն ալ կը զեռեղէր: Բայց ամէն վարդ իր փուշն ունի. ուստի հարկ է ըսել որ այդ աշխարհահազակ գիտն ալ իր փառները ունի, ինչպէս կը կարգանք Ֆրանսական թերթի մը գիտական բաժնին մէջ: Ք. . . Ճառագայթները առանց իրենց ազդեցութիւնը գիտնականներէն բացատրելու, կը նմանցունին խընդումներն և վաւաչոտ կիներու, որոք մարդս իրենց կը քաշեն: Բայց այդ կերպ մօքիչ կիները միեւնոյն ազդեցութիւնը չեն կրնար ունենալ ամէնուն վրայ. ոմանք բոլորովին գլխէ կը հանեն. ոմանց միայն քսակը կը պարպեն, իսկ ուրիշներուն ալ քիթին կը խնդան: Այսպէս ալ երբ մարդ շատ անգամ ինքզինքը կ'ենթադիէ Ք. . . ճառագայթներուն, մարմինը կատարելապէս կրնայ տարջալուծուիլ, ինչպէս կ'ընէ Պ. Ֆէլիքս Մէհէօ, այս ճառագայթներն ալ ճիշդ ելեկտրական, ձայնի ու լոյսի նման իրենց արագութիւնը և ինքնաշարժ զօրութիւնը ունին, որոնք յառաջ կը բերեն այլևայլ վիճակներ, եւ այդ վիճակներն ալ կրնան ըլլալ մարդուս ֆիլիքական կազմութեան քայքայումը: Պատիկ երբեք փափաքելի չէ տեսնել մեր սիրելի հիւանդներու մարմնոյն և կամ անոր մէկ մասին քայքայուած կըմախքը. հոգ չէ թէ քիչ մը աւելի տառապին:

Պ. Ֆելիքս Մէհէօ՝ Սէն—Լուի հիւանդանոցին մէջ երկարօրէն այս խնդրոյն վրայ ուսումնասիրութիւններ կատարելէ վերջ՝ ժողովրդեան կը ցուցնէ Ք... ճառագայթներուն ներքե մնացած ձեռքի մը լուսանկարը . այդ ձեռքը Միւզէ—կը վէնի մէջ մարդու մը ձեռքն էր . Նոյն անձը ամեն օր ինքզինքը կենթարկէր Ք... ճառագայթներու , առանց նկատի առնելու այն կոնխահաս վտանգները՝ որոնք պատրաստ կը սպասէին իր գլխուն վերեւ :

Ժողովուրդը դահէր . վասն զի օրըստօրէ գաղափար մը կը կազմէր այդ ճառագայթներուն ազդեցութեան վրայ . Ուրախ էին , որովհետեւ անոր շնորհիւ կ'ազատուէին ահաբեկիչ վտանգէն և կը զգային թէ իրաց վիճակը պէտք է միշտ երկու կողմէ զիտել և ըստ այնմ վարուիլ Քաջարի մարդը ցտեղը առջինն համարելով կը տուկայ այնչափ . մինչև որ ձեռքերը այլևս կը դադարին գործելէ : Ի վերջոյ կը սկսին մազերը թափիլ , մորթը կը կծկուի , կարմրագոյն մկանունքները կուռնին որմէ վերջ կը թափին թարթիչները , մօրուքը և պեխերը , եղունգները արմատէն կը փրթին և ի լրումն այս ափնուն աչաց կապերը կը տկարանան և աչաց լոյր տակաւ առտակաւ կը նուազի :

Ուրիշ կին մըն ալ իր բժշկին յանձնարարութեան համեմատ երբ Ռէօնթէնեան ճառագայթները կ'ընդունէր , կը տեսնէ որ մազերը կտրաց կամաց կը թափին . բայց երբ կը զգայ թէ աչքին տեսութիւնն ալ կը փնտռուի , չի վարանիր աչքը տփոց մը քաշել հանգիստանալու ժակին :

Զգուշացէր ուրիշն Ռէօնթէնեան ճառագայթներուն ենթարկուելէ . կեղծ բարեկամ մըն է ան :

ԹԱՏՐՈՆ ՍՍԵՐՍԸ

1902 Մարտ 16 Շաբաթ գիշեր ժամ 8ին

ԹԱՏԵՐԱՍԷՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿՈՂՄԷ

Ի ՆՊԱՍՏ

ՕՐԻՈՐԴ ՄԱՐԻՔԱ ԳԱԼՃԵԱՆԻ

Յեղափոխական Աքանաս Տիագո
Եղերդ հինգ արար և ութը պատկեր

Երգեր և Պարերգներ
Թապլօ , Եղբայրասպանը մէկ արար
Որդեասպանը , տրամ մէկ արար
Զաւեշտ մէկ արար

ՏԵՐԱԳԻՐ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ .

Սըթմա բունար .

Պաշտօնադուրկ ուսուցչուհին բարեկենդանի ուր . օրը ցորեկ ժամանակ էրիկ մարդու հագուստ հագնելով առանց դիմակի (Ֆրայ մասքէ) գնչուներուն թաղը մէկ երկու տեղ այցելութիւն տուած է :

Կրանիցա (սահմանագլուխ)

Հոս օրօրոցի տղաքներն ալ պիտի սկսին խուճաւ խաղալու :

ԲՈԺՈԺԻԿԻ ԳԱՆՔԱՐԸ

Վառնա .

Ամեն կողմէ յայտնուած փափագին գոհացում տալու համար , Պ. Բոժոժիկ այս տարի ալ Զատիկի Բ . օրէն սկսեալ իր հռչակաւոր ԳԱՆՔԱՐԸ պիտի պտտցունէ , որուն անհամբեր կը սպասեն եղեր հետաքրքիր տկանատեսներէ աւելի՝ զանքաւի զարնուելիք բաւական թուով յաճախորդներ :

ԾԱՂՐԱՍԻՐԱԿԱՆ



«Ի զուր կը ճգնիք որ փախչիք ,
Հէնց պոչերնիդ ձեռք տըրիք » :

ՊԻՇՆԿ

ՎԻՔԹՈՐ ՀԻԼԿՈ

Վիքթոր Հիլկոյի համար. — Օէնի եղեռնա-
դատ ատենանք անցեալ շաբթու ի պատիւ Վիք-
թոր Հիլկոյի ազատ արձակեց Լոռան Վէնստան ա-
նուն մարդ մը, որուն պատմութիւնը շատ կը նը-
մանի «Թշուառներու» հօրոսին՝ ժան Վալթանի
պատմութեան: Վէնստան, որ հիմա 33 տարեկան
է, 26 տարեկան եղած ատեն ի բացակայութեան
20 տարի թիապարտութեան դատապարտուեցաւ:
Ամբաստանուած էր թէ ուրիշ անձի հետ մեղսու-
կից գտնուած է գողութեան մը մէջ: Վէնստան
ուրացաւ: Դատարանին առջև իր կեանքին պատ-
մութիւնը ըրաւ, ըսելով թէ ձեռքէն եկածը ը-
րաւ դրամ վաստկելու համար, բայց ամէն բան
իրեն հակառակ գնաց: Երբ բանակին միացաւ,
իր անցեալը երեան ելլելով, դատաւիք եղաւ:
Յետոյ Գերմանիա և Աւստրիա գնաց, և հոն շա-
րաշար աշխատելով քիչ մը դրամ վաստկեցաւ և
Փրանսա վերադարձաւ, որովհետեւ իր հայրենի-
քը բնակիլ կ'ուզէր: Ընդհանուր դատախօսը բաղ-
դատեց ժան Վալթանը՝ Լոռան Վէնստանի հետ, և
երկուքին ալ պարագան միեւնոյն գտաւ: Դատա-
րանին նախագահը գովելով Վէնստանի իրրեւ պատ-
ուաւոր մարդ ապրելու համար ըրած ջանքերը,
ազատ արձակեց զինքը:

Վիքթոր Հիլկոյի տարեդարձին օրը, 26 փե-
տրվար, տօնի օր մըն էր: Բարիչի բոլոր հան-
րային հաստատութիւնները, դպրոցները, ճեմա-
րանները, լիսէները ամենքն ալ գոց էին: Ու-
կարանն ալ ի պատիւ մեծ գրագէտին փակուած
էր: Վիքթոր Հիլկոյի պատկերով յատուկ շքադը-
րամներ կոխուած էին, որոնք բաժնուեցան հա-
րիւրամեակին հանդէսներուն պաշտօնապէս մաս-
նակցող անձնաւորութիւններու: Հանրապետու-
թեան նախագահ Պ. Լուպէ և նախարարները ոս-
կի շքադրամը ստացան: Խորհրդարանին և քա-
ղաքապետական խորհուրդին անդամները՝ արծաթ,
իսկ հրաւիրեալները և զանազան պատուիրակու-
թեանց անդամները՝ պղինձէ: Այս շքադրամին
մէկ կողմը կը գտնուի ընար մը և դափնիի ճիւղ
մը, իսկ միւս կողմը մեծ բանաստեղծին կիսա-
դէմքը: «26 փետրվար 1802--1902» արձանա-
գրութեամբ:

Վիքթոր Հիլկոյի ի պատիւ Փրանսայէ դուրս
ալ հանդէսներ տեղի ունեցան: Պրիւսէի մէջ ըն-

կերվարականները գրական ժողով մը գումարե-
ցին: Փաստաբան մը վերլուծեց մեծ բանաստեղ-
ծին գրական և քաղաքական գործը: Ուրիշ ա-
տենաբաններ ալ քաղաքական կարգացիւ՝ Վ. Հիլ-
կոյի գործերէն: Յետոյ յիշատակարան մը գըր-
ուեցաւ այն տունին վրայ՝ ուր բնակեցաւ Վ. Հիլ-
կո աքսորուած ատեն:

Հռոմի մէջ ալ հանդէսներ տեղի ունեցան
նոխագահութեամբ Պ. Լուծադդիի և ներկայու-
թեամբ Հռոմի ընտրելագոյն դասակարգին:

..

Վիքթոր Հիլկոյի յիշատակին կանգնուած
արձանը վեց տարի առաջ ապսպրուած էր արձա-
նագործ Պարիսի: Այս արձանը իր տեսակին մէջ
գլուխ-գործոց մը կրնայ համարուի: Մեծ բա-
նաստեղծը սուքի վրայ կայնած է: Իշխող դիրք
մը բռնած և շրջապատուած ալլաքսոնակիսն պատ-
կերներով, ձախ կողմը կը ներկայացուի Բանաս-
տեղծութիւնը՝ թեւաւոր, որ քնար մը կը մա-
տուցանէ իր հոյակապ ու տաղանդաւոր թարգ-
մանին, ալ կողմը կը գտնուի Ողբերգութիւնը,
ալ ձեռքին մէջ ունենալով զէմք մը:

Թ.

Ձինաց Թասրոնները. — Չափազանցութիւն չէ
եթէ ըսուի որ չկայ ժողովուրդ մը որ չինաց չափ
սիրահար ըլլայ թատրոնի, և այս՝ շատ հին ժա-
մանակներէ ի վեր:

Ձինացիք տաւոյն չորս եղանակներուն յա-
տուկ թատերախաղեր ունին: Ամրան եղանակի
թատերախաղերուն մէջ ձմրան եղանակի դէպքեր
չեն ներկայացուիր: Ամառը թատրոն գոցող Ձի-
նացին բեմին վրայ չի տեսներ ձիւնի երեւոյթ,
ինչպէս ձմրա՝ եղանակին մէջ գեղեցիկ օդեր
կամ ամառ եղանակի վերաբերեալ դէպք մը:

Ձկնորս շուներ. — Կասքօնիայի (Փրանսա) ե-
զերքներու շատ մը ձկնորս կիներ տեսակ մը
չուն կը գործածեն ժայռերուն տակ պահած
ձուկերը գտնել հանելու համար: Այդ շուները
ժայռէ ժայռ շուտափոյթ խոյանալով, կը խրտչե-
ցունեն ու կը փախցունեն ձուկերը զորս ձկնորս
կանայք դիւրութեամբ կը բռնեն:

Սիպերիոյ եզերքն ալ շուներ կը գործածուին
եզեր ձկնորսութեան համար: Ծունները ծովը մը-
նելով՝ ձուկերը բերնով կը բռնեն ու եզերք կը
փոխադրեն եզեր:





ԿԵՂԾ ՁԵՌՆԱՄՈՒՆ

Ճարտար քաղաքատեղ մը օր մը ճաշելու համար Բարիդի առաջնակարգ ճաշարաններէն մէկը կը մտնէ :

Ճաշելու միջոցին, սեղանին արծաթեայ ըսպանները իր ուշադրութիւնը գրաւելուն, անոնցմէ գոնէ դգալ մը գրպանել կը մտադրէ, բայց տեսնելով որ սեղանակիցը զինքը կը դիտեն, կը սկսի ճար մը մտածել : Այն միջոցին կը տեսնէ որ ճիշդ իր դէմը նստող յաճախորդ մը, որ կերակրի թէ իրեն պէս քաղաքատեղ մը ըլլալու էր, ճարպիկութեամբ դգալ մը կը գրպանէ : Ասոր վրայ սա ճարտար հնարքին կը դիմէ : Կը սկսի քովի նստողներուն հետ տեսակցիլ և անոնց կը յայտարարէ թէ ինք առաջնակարգ ձեռնածու մը ըլլալով, Եւրոպայի շատ մը քաղաքներուն մէջ ճարտար փորձեր ընելէ վերջ, այս անգամ ալ Բարիդ եկած է, և ի հաստատութիւն իւր խօսքերուն, կը յարէ :

— Պարոններ, կ'ուզէք որ իմ ճարտարութեան մէկ փորձն ալ ցուցնեմ ձեզ այս վայրկեանիս :

— Այո, այո, կը ձայնեն սեղանակիցք :

— Ուրեմն տեսէք, աւառիկ սա դգալը ամենուրեքին առջեւ գրպանս կը դնեմ, ըսելով դգալը գրպանելէ ետք՝ կը յարէ : «Հիմա, պարոններ, այս դգալը՝ դիմացս նստող պարոնին գրպանէն պիտի հանեմ», և հպարտօրէն անոր մօտեցած՝ ձեռքովը դրածի պէս գրպանէն դգալը կը հանէ : Հարկ չէ ըսել թէ ներկայք չափազանց կը զարմանան :

Իսկ միւս քաղաքատեղ մտածելով որ եթէ հակառակորդին կեղծիքը երեւան հանէ՝ իր ըրած գողութիւնն ալ յայտնուելով պիտի խայտառակուի, անձայն կը մեկնի ճաշարանէն ու փողոցին մէջ անոր կը սպասէ :

Երբ մեր կեղծ ձեռնածուն ալ փողոց կելնէ, առաջինը զայն դիմաւորելով, կըսէ :

— Պարոն, հիմա աս ըրածիդ հաւնեցա՞ր :

— Ի՞նչ ընեմ, եղբայր, հացի կռիւ է այս :

Գող մը ծեր գիտնականի մը տունը մտած՝ ասդին անդին պտտելով աղմուկ կը հանէր :

Գիտունը արթննալով. — Է, բարեկամ, ի՞նչ կընես հոգ, թուղթերս տակնուվրայ մընէր :

Գողը. — Թուղթերդ մի՛ . . . բայց անոնք ինծի համար արժէք չունին, գրածդ է որ կը փնտռեմ :

Գիտունը. — (Խնդալով) Դրամս մի՛ . . . հա, հա, հա, բայց թշուառական, դուն անանկ բան մը կը փնտռես գիշեր ատեն, զոր ես անկարող եմ ցորեկ ժամանակ գտնելու :

Փաստաբանը ու իր պաշտպանեալը :

Փաս. — Ձարմանալի մարդ, ինչո՞ւ այդչափ դիւրին գողութեան մը համար այդչափ անճարակ գտնուեցար :

— Այս անգամուան համար ներեցէք պարոն փաստաբան, դեռ վարժութիւն չունէի :

Խլափուկ կնիկ մը իրեն ծանօթ երիտասարդի մէջ կըսէ :

— Մուշու Աստիկ, քեզի անանկ աղւոր աղջիկ մը գտայ քի՛ արթըդ պէ՛ գատար օլուր : Հօրենական մնացած տասներութը հատ կով ունի, մի՛նակ անոնց կաթովը էրկուքնիդ ալ աղւոր աղւոր կապրիք : Էկու աս խամէթը մի՛ փախցնէր տէ, սա աղջիկը քեզի ընեմ :

— Աղէկ կըսես ամա, Հոռոփ տուտու, տասներութը հատ կով ունի կըսես կոր : մէյ մըն ալ ինք կըլլայ տասներ ինը : մէյ մ'ալ ես ըլլամ՝ նէ քսան, տեղ մը պարընի՛ չեսք կընար ըլլալ քի :

Երկու տիկիններ :

— Կարենէ տուտու, քրոշդ աղջիկը նշանեցի՞ք :

— Չէ ամա անանկ միտք մը ունինք :

— Որի՞ :

— Մենք ալ շաշրմիշ ենք ըրեր, ուզող շատ կայ ամա, կը մտմտանք կոր :

— Շատ մտմտալուն սօնը աղէկ չէ, ետքը թուրչի կը դնես :

— Վո՛ւյ զահէր ասիկա լահանա է :

— Չէ ամա, պահես նէ կըլլայ :

ԽԻՍՏ ՇԱՀԵԿԱՆ ԱԶԴԵՐ



ՃՐՍԱՆԹԷՆ ԻՍԻԻՃԱՏԷ ԱՐԷՔ

Ծառայական՝ ազգէի միւղաի-
գա ունեցող աղբիւ մէօճթաճնե-
րուն ազգասիրաբար վէ եղբայ-
րաբար հարուր զրուշին
մահիյէ 25 զրշ. կիւ-
ղէշթէով վէ կիրանդա-
հա րէհինաթով իսթի-
գրազ կ'անիմ. վէ այն
րէհինաթը ահապը
մաթլուպին ետ չի տա-

լու համար պէտք եղած խօնթօխօրօնթօ վէ պին
պիր չէշիւտի միւթէճալիւզ շանվորդիւթեան
ղայտէներուն վուզուֆը թամմէի մալիք եիմ.


Ասկէց դաթիհազար, խանութս միւրաճաթ
անելով թիւթիւն առնել ուզողները էկէր աչ-
քերնին չորս չի բանան իսէ՝ տուած մէկ ֆրանք-
նոցին աճէլէ թէրթիպ ճամէքեանը կու նետիմ
վէ «տուածդ 20 սանդիմնոց է» ըսելով բաքէթ
մի 40 բարանոց թիւթիւն ձեռքը կը դնիմ, կէօզ
կէօրէ մարդուն սէքսէն սանդիմը կըլլելու հըմար.

Ծառայից ծառայ

Մելիքոն Գորտուկենց

Փրօանթէ իսթիֆատէ արէք:

ԵԶԱԿԱՆ ԱՌԻԹ



Խանութիս ըռաֆներուն կուզութիւն պատ-
ճառող թախըմ մը չի քշուելիք հեղինակութիւն-
ները պատրաստ եմ Զատիկի առթիւ տուպրակին.

րով ծախելու, որոնք չէօրէկ և բաստրմա բաթ-
տիւլու շատ յարմար են:

Փոխադրութեան ծախքը գրատանս վրայ է.
Վառնա Հայկական Գրատուն

ԴԱՍԱԽՈՍԹՈՒԻԻՆ



Փրանսերէնի և Գերմաներէնի հմուտ երի-
տասարդ մը տրամադիր է այդ երկու լեզուներ-
ը որովիլ ուզողներու գոհացուցիչ պայմաններ-
ով դասեր տալ Դիմել խմբագրութեանս. 1—5

ՏՈՒԹՈՒ ԱՎՈՒՌԶԱՎՈՒՆԵԱՆ



Մասնագէտ Զրուգօբային, ուղախային և խամ-
խալաթային հիւանդութեանց

Մասնաւորապէս կը դարմանէ խառնաէվտալը-
ները, խուռուսէվտալըները և պօռուսէվտալըները.
Դարմանատունն է Թիմարհանէ փողոց, թիւ 3410
(Մնացեալն յայտրով)

ԹԵՐԹՈՆ ՀԱՅԵԼԻ (49)

ՈՐՆԵ ՏՐ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

ՊԱՐՄԻՐ-ՄԱՍՈՆԿԸ



Հատ չանցած մամուկը տեսաւ իր կուրծքին վրայ
որ ահագին ծանրութիւն կը գար, և իր երեսին միւր
սառնեցաւ այդ գարշիլի հպումէն: Յետոյ սոսկալի աղա-
ղակ մը արձակեց, զգալով քաղանին ծամելիներուն մը-
խըլճիլն իր շուրթերուն մէջ, և այդ անագորոյն ցա-
ւին աղղեցութենէն յանկարծ վերագտնելով իր շար-
ժումներուն աղատութիւնը, վար ցատքեց անկողնէն եւ
ծուցէն դուրս փախաւ, խելայիզ, շնչասպառ, պաղ
քրտինքով ողողուած զոր արիւն կը կարծէր, եւ աղա-
ղակելով:

— Օգնութիւն, կարմիր—Մամուկը, կարմիր—
Մամուկը:

Առանց ուր երթալը գիտնալու մէկ ոտամով ան-
ցաւ սողնին յարկը տանող սանդուխէն: Հոն՝ ներս
ցատքելով առաջին բաց դռնէն, թղթախալի սրահը
նետուեցաւ աղաղակելով:

— կարմիր—Մամուկը, կարմիր—Մամուկը:

Անմիջապէս տարօրինակ տեսարան մը առաջ ե-
կաւ:

Նորեկին ի տես՝ հոն գտնուող բոլոր մարդերը ա-
նոր դարձած էին, բան մը չը հասկնալով անոր սոս-
կումէն, աղաղակներէն, բայց անոնցմէ մէկը յանկարծ
ստիւ էր ելած եւ երկար դանակով մը զինուած, աչքե-
րն սպառնադին, բերանը սոսկալի կերպով կծկուած,
կը պատրաստուէր մեղցունել ով որ համարձակէր ի-
րեն մօտենալ:

Չանկա տեսնելով, Մէնկ ձեռքն անմիջապէս ճակ-
տին տարաւ, կարծես յիշողութիւնը տեղը բերելու հա-
մար: Ար թուէր իրեն թէ կը ծանշնայ, այդ մարդը,
թէ անոր տգեղութիւնը արդէն իր աչքին գարկած
էր: Բայց ո՞ր, ե՞րբ, ի՞նչ պարագաներու մէջ:

Իր թրրական նուազումէն զինքն աղատող ցաւը
ալ գոյութիւն չունէր: Ուրեմն սոսկալի մղձաւանջի մը
առարկան եղած էր լոկ: Այն հրէշը, որուն կարծած
էր թէ զոհ կերթայ, ափիոնէն զրգոտուած իր ուղեղին
մէկ արդիւնքն էր:

Բայց ինչո՞ւ այդ կարմիր—Մամուկը: Ի՞նչ յա-

րաբերութիւն կրնար կենալ երազին ու իրականութեան
միջեւ: Ինչո՞ւ այդ բիրտ դէմքով մարդը կը սպառնար
իրեն: Դեռ կը քնանա՞ր կամ թէ իրաւ արթնցած էր:

Սակայն իր միտքին այս աշխատութիւնը հազիւ
քանի մը վայրկեան տեւեց, և յանկարծ հասկնալով
ցնորակոծման երեւոյթը որուն ենթարկուած էր, խելքը
գլուխն եկաւ: Այն ատեն րազուկները երկնցունելով
դրան մէջէն գոչեց:

— Ա՛հ, կը ծանշնամք եղ: Դո՛ւն ես լէնկ—Թա
լանկի սպանիչը: Բռնեցէ՛ք, աս մարդը: Բռնեցէ՛ք:
Ես Մէնկ մանտարէնն եմ:

Իրաւ Չուն էր, Չուն որ խեղդուած չէր ի լամա,
ինչպէս կարծած էր Բերքինս և որ, իր երգմանը հաւա-
տարիմ, եկած էր սպասելու, իր սիրելագոյն մոլու-
թեամբն զբաղելով, այն ժամադրութեան վայրկենին զոր
սուած էր Սոլ—Դրոտէի, կախաղանին տակ:

Դատաւորին բացառանշութենէն՝ խաղացողները
ոտքի ելած էին, բայց նախկին մտավաճառը, ամեն
բան տապալելով իր առջեւ, պատուհանին յեցակին
վրայ ցատքեց և անկից՝ պարապին մէջ: Զուրին վրայ
մարմնոյն աղմուկը լսուեցաւ:

Այս ամենը այնքան արագ տեղի ունեցած էր որ
ոչ ոք կրցած էր անոր դէմ դնել: Իրենց ապշուածնէն
և իրենց սարսափէն սթափելով, վառն զի ներկաներէն
թերեւ ոչ ոք փոյթ պիտի ընէր թշուառականին դէմ
կռուելու, մէկ քանին պատուհանէն վար ծուցան՝ ալ-
նարկով փնտռելու համար զայն դետին վրայ աղաղակե-
լով: «Բռնեցէ՛ք մարդասպանը:»

Գիտէին որ Չուն խղդուելու միտք չունէր, այլ
փախչելու: Ուրիշներ. ընդհակառակն, վար ցատքեցին
սանդուխէն. մակոյկներ մտան, աւաղակն հետապնդելու
համար:

Իսկ Մէնկ, սարսափահար, ոչնչացած, մարդասպա-
նը ձեռքէն փախցնելուն յուսահատ, և ասիկա ծիշդ
այն վայրկենին ուր դիպումը իր դիմացը կը հանէր
զայն, ինկած էր աթոռի մը վրայ և զինքն հարցափոր-
ձողներուն կը պատասխանէր կցկտուր խօսքերով. զորս
կընդմիջէր հաւաքանքներով ու անէծքներով:

— Ա՛հ, ոճրագործը, ձեռա՛յը, կը կրկնէր տասնե-
րորդ անգամն ըլլալով: Հո՛ս ըլլայ, վերջապէս գտնեմ
զինքը, և կարենայ փախչի՛լ, Հիմակ լմնցա՛ւ, կորսուե-
ցայ:

— Դեռ ոչ, սիրելի ռախապահս, դեռ ոչ՝ ըսաւ
յանկարծ ձայն մը որ սարսափացուց զինքը:

Անձկոտ աչքերը դարձան մարդու մը վրայ որ

